Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների Ազգային Ակադեմիա
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն

Republic of Armenia
National Academy of Sciences
INSTITUTE FOR PHYSICAL RESEARCH
Non - Profit State Organization

2440 - 152
15.08.2025թ.

ԷԼ-ՎՈՐԼԴ ՍՊԸ –ի տնօրեն
պրն Միխեիլ Մխիթարյանին
(Վրաստան, Թբիլիսի, Սամգորի շրջան , սբ Բարբարա թաղամաս 102, բն 1)

Ծ Ա Ն Ու Ց Ում

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

Համաձայն ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և ԷԼ-ՎՈՐԼԴ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 28.04.2025թ. կնքված «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ- 25/21» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1-ին կետի, Վաճառողը պարտավորվում է Գնորդի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված քիմիական լաբորատորիայում կիրառվող սարք՝ pH չափիչ, pH համակցված էլեկտրոդներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Միաժամանակ, Ձեր կողմից ինստիտուտի տնօրենին հասցեգրված թիվ 05-25 առ 08.08.2025թ. գրությամբ նշվում է Պայմանագրի 2-րդ չափաբաժնի մասով ապրանքի մատակարարման անհնարինության և դրանից բխող բոլոր տույժերը և տուգանքները վճարելու պատրաստակամության մասին:

Հիմք ընդունելով վերագրյալը՝ ստորև ներկայացնում ենք նշված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի որոշումը Պայմանագիր կնքած Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով:

Հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 (հինգ) աշխատանքային օր որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 13500 (տասներեք հազար հինգ հարյուր) և 20250 (քսան հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, համապատասխանաբար, վճարելու համար: Փոխանցումը

Postal address: 0204, Ashtarak-2, Armenia; Tel.: 374 10 288150; Fax: 374 23231172; E-mail: ifi@ipr.sci,am

անհարաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, Հ/Հ 900448000399)

Սահմանված ժամկետում Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները չվճարելու դեպքում պարտավոր ենք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն նախաձեռնել ԷԼ-ՎՈՐԼԴ ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ընդ որում, «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-25/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.13 կետի համաձայն՝ եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն սույն ծանուցումը հրապարակվում է **www.procurement.am** հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Հարգանքով,
տնօրեն Պ. Մուժիկյան

Postal address: 0204, Ashtarak-2, Armenia; Tel.: 374 10 288150; Fax: 374 23231172; E-mail: ifi@ipr.sci,am